

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 52
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին“ Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի „բ“ ենթակետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հուլիսի 19-ի N 140-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կանոնադրության 1-ին գլխի համաձայն ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- Հակոբյան Ա. - մարզպետի տեղակալ, նախագահ
- Գալոյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
- Մնացականյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
- Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
- Սաֆարյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ
- Այվազյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ
- Խաչատրյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և

սոցիալական ապահովության վարչության սոցիալական
ապահովության բաժնի վարիչ

- Հովհաննիսյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և
երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր
մասնագետ, քարտուղար
- Չատիկյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և
երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի
գլխավոր մասնագետ
- Կարապետյան Տ. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և
երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի
առաջատար մասնագետ
- Խլղաթյան Խ. - "Գեղամա աշխարհ" մարզային թերթի գլխավոր խմբագիր
- Գևորգյան Ա. - "Մարտունու կանանց համայնքային խորհուրդ" Հ/Կ
- Մոմջյան Կ. - "Կանանց իրավունքների կենտրոն" Հ/Կ

2.Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2012 թվականի միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքի մասին պարբերաբար զեկուցել մարզպետին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հունիսի 17-ի „Գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողով ստեղծելու մասին“ N 52-Ա կարգադրությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ